

## ԼՈՒԻԶ ՍԻՇԵԼ

1905 Յունիս 9/22ի օրը Ազգերու Պատմութեան մէջ քանի մը դէպքերով որոշ նշանակութեամբ մը աչքառու էջ մը պիտի կազմէ :

Լուիզ Միշէլի թաղումը այդ էջին գեղեցիկ մասերէն մէկը պիտի ըլլայ ապահովաբար :

Մարդկութեան մէջ այդպիսի դէմքերու անհետացումը այնպիսի պարագաներ կը գոյացնէ, որոնց գոցելու համար երկար ու ձիգ տարիներ պէտք կըլլան :

Լուիզ Միշէլի նման մարդկային իսկական արժանաւորութեան ու վեհութեան աստիճանին վրայ կանգնած անհատներ գտնելու համար, ստիպւած ենք անցեալները քրքելի եւ Պայրընները, Հիւկոնները ու Կառիպալտիները վերյուշել :

Այդ տիպար կնոջ՝ Ազատութեան, Հաւասարութեան եւ Եզրայրութեան այդ անվեհեր ու տոկուն պաշտպանին՝ անձամբ ընթերցողը իրաւամբ պիտի հարցնէ .

— Ո՞վ էր Լուիզ Միշէլ :

Այդ կինը մէկն էր այն հազադիւս էակներէն, որոնց գոյութիւնը Հասարակութեան մը, Ազգի մը, նոյն իսկ Մարդկութեան որոշ ուղղութեան եւ համոզմունքներու պատկանող դասակարգերուն վստահութիւն կը ներշնչէ կեանքը դիտել աւելի համարձակ նայւածքով, նպատակին դիմել անսայթաք ու հաստատ քայլերով, եւ անսկիսկալ արդիւթներու, դժւարութիւններու առաջ վայրկեան մ'իսկ չկորսնցնել այն ինքնավստահութիւնը, որ միայն զաւանանքի մաքրութիւնը եւ ձգտումին վեհութիւնը ու անչանախնդրութիւնը կը բնորոշէ :

Լուիզ Միշէլ ծնած էր Հօթ-Մառնի (Haute-Marne) վտօնքուս փոքրիկ գիւղին մէջ, եւ 1853ին ուսուցչուհիի կոչումը կընդգրկէր, կոչում մը, որուն թղթորովին այլապէս էր հասկցած, եւ այդ ըմբռնումը առիթ տուաւ առաջին ընդհարումը ունենալ Նաբուէօն IIIի պաշտօնեաներուն հետ, ակնարկներով կայսեր անձնաւորութիւնը վիրաւորած ըլլալուն համար. ընդհարում մը, որ իր փոքր տարիքին շնորհիւ միայն թիարանի սպառնալիքով կեզրափակէր :

« Եւ սակայն — կը գրէ Լուիզ Միշէլ, իր « Կեանքիս յիշատակները եւ պատահարները » անուն գործին մէջ — զայն միայն Հոռովմայեցի կայսրի մը հետ բազդատած էի : »

Սակայն այդ առժամանակեայ աղատուժը արգելք մը չեղաւ քանի մը տարի յետոյ՝ այս անգամ իրապէս՝ Նոր Գալէտոնիայի թիարանին դժուարին ճամբան ընել :

Լուսիզ Միշէլի նկարագիրը դիւրաբեկ չէր եղած . արդեւքները զայն աւելի գրգռած էին . եւ թիարանէն վերադարձին զայն ամբողջապէս իր նպատակներու իրագործումին նւիրւած կը դասենք :

Գիտակից մարտիկի մը ըոյրը յատկութիւններուն հետ օժտւած կը կը տեսնենք զայն կանաչի սրտի մը ամենաքնքոյշ զգացումներով, մայրական անձնւերութեան մը բովանդակ վեհութեան մէջ լուսապսակւած :

Բարիդի պաշարման ժամանակ պատահած եղելութիւն մը՝ որը պատմած է Վիկթօր-Հիւկօ՝ կը բաւէ դայտուն կերպով յոյս տալու այդ կնոջ հոգիին մաքրութիւնը եւ զգացումներուն վսեմութիւնը :

« Այն ամենադաժան ժամանակներէն մէկն էր — կը պատմէ մեծ և բանաստեղծը — երբ հացը եւ ածուխը պերճանքի առարկաներ դարձած և էին : Լուսիզ Միշէլ ամէն օր չըջակայքի մանուկները կը հաւաքէր : « զանոնք կըթելու եւ միտժամանակ իրենց ծակ կօշիկներով ձիւներուն « մէջ թափառելէ արգիլելու համար :

« Տիկին Մօռիս երբ լսեց, գնաց զայն տեսնելու, եւ խեղճ աղջիկը « գտաւ ծայրայեղ անցկութեան մը մէջ, գողգողալով այն մաշւած շըր- « ջաղգեստին տակ, որը արևոյց եղանակին երբեք չէր համապատասխան « ներ :

« Երեկոյեան Տիկին Մօռիս զիս մէկ կողմ առնելով ըսաւ :

— Այսօր Լուսիզ Միշէլը սևսայ, դուքս չարժեց : Յուրտին դէ՛ր պատասպարելու համար ոչինչ չունի, եւ ապահովաբար տանչուում է :

— Է՛հ, լաւ — ըսի Տիկին Մօռիսին — զրպանէս 100 Ֆրանքի դրամատոմս մը հանելով, խնդրեմ, այս դրամը իրեն տարէք, եւ թող զնէ ինչ որ պէտք է իրեն :

« Տիկին Մօռիս անուշա փութաց այդ գումարը հասցնել Լուսիզ Մի- « շէլին :

« Ի՛նչ ժամանակ յետոյ դարձեալ իրեն այցելութիւն մը կուտայ, « եւ զայն առաջւան չափ դէ՛չ հագւած կը գտնէ :

— Ուրիմն ձեզ պէտք եղածը չգնեցի՞ք — կը հարցնէ Տիկին Մօռիս :

— Ի՛նչ բնէի . այս տղաքը ոչինչ չունէին, ո՛չ գուլպայ, ո՛չ կօշիկ եւ ո՛չ մնացեալը : Զանոնք քիչ մը կոկեցի, եւ իրաւ որ 100 Ֆրանքը վերջացաւ — կը պատասխանէ Լուսիզ :

— Գիտէ՞ք — ըսաւ Տիկին Մօռիս՝ նախաճաշին — թէ Լուսիզ Միշէլ ի՞նչ ըրած է ձեր 100 Ֆրանքը . ահա թէ ի՛նչ . Բոյորն ալ ծախսեց, է իր հաւաքած փոքրիկ աղջիկներուն համար, եւ զայն իր նախկին գրութեան մէջ դատայ կրկին :

« Դէպ ի գլորոցս գացի՝ անկէ երկրորդ 100 Ֆրանքնոց դրամատումս  
« մը հանեցի, եւ Տիկին Մօսիսի երկարելով .

— Այս անգամ — ըսի — թող իրեն համար ծախսէ :

« Քիչ ժամանակ յետոյ անձնւէր յանձնակատարիս կը հարցնէի .

— Վերջապէս Լուիզ Միշէլ լաւ հագւած է :

— Ա՛հ — ըսաւ Տիկին Մօսիս — չէի համարձակուում ձեզ խօսել .  
անուղղելի է այդ աղջկը. երեւակայեցէք որ Ձեր երկրորդ նւէրը առա-  
ջինի ճամբով գացեր է :

— Չանոնք տաքցնելու համար ամուսի գնեցի — ըսաւ ինձ Լուիզ  
Միշէլ — յետոյ դեռ կային այնպիսիներ, որոնք ա՛յնքան գէշ էին հագ-  
ւած . չէի կրնար զանոնք այդ գրութեան մէջ տեսնել :

— Պէտք է սակայն որ իրեն պէտք եղածը ունենայ — ըսի ես —  
ահաւասիկ 100 Ֆրանք եւս , բայց իրեն մի տաք , մինչեւ որ ձեզ չխոս-  
տանայ իրեն համար գործածել :

« Երեկոյեան՝ երբ Տիկին Մօսիսին կը հարցնէի իր այցելութեան  
« արդիւնքի մասին .

— Ձեր գրած պայմանով Լուիզ Միշէլ մերժեց ընդունիլ 100 Ֆրանքը  
— պատասխանեց տիկինը , եւ աւելցուց .

— Ձեմ կրնար. — ըսաւ ինձ Լուիզ Միշէլ — ինձմէ անկարելին պա-  
հանջել է այդ . չպիտի կրնամ ինձ համար թան մը գնել , երբ մտածեմ  
թէ այդ աղաքը կը տառապին :

— Անշուշտ կերեւակայէք որ — վերջապէս Տիկին Մօսիս — դար-  
ձեալ դրամատումսը ձգեցի իրեն : »

Եւ այս պատմութիւնը վերջապէս ժամանակ Հիւկօի աչքերուն մէջ  
արցունքի կաթիլներ երեւցած են . . .

Իր կեանքի այս յուզիչ մէկ դրուագը կրնայ բնորոշել Լուիզ Միշէ-  
լին , որը՝ ինչպէս յիշեցի՝ եղած է միևնոյն ժամանակ Ֆրանսական  
ազատագրական շարժումին առաջին վտանգալից շարքերուն մէջ :

Իր նպատակներուն մեծ մասին իրագործումը տեսնելով հանդերձ ,  
տարիներու բեռին տակ դեռ տոկուն, սպիտակ մազերով լուսապսակած,  
Լուիզ Միշէլ անգործ չէր մնացած, նոյն իսկ մինչեւ իր մահուան նախըն-  
թաց օրերը ինկածներու, ճնշւածներու օդտին հրապարակային ժողովներ  
կազմակերպելով , եւ որոնցմէ մէկուն ծրագրիլ իր վերջին օրերուն  
կազմած՝ չպիտի կրնար իրագործել . . .

« Լուիզ Միշէլ հոգեվարք է . . . Լուիզ Միշէլ մեռա՛ւ . . . »

Այդ կարճ բայց յնցող լուրը Մարսիլիանէն կայծակի արագութեամբ  
տարածւեցաւ Ֆրանսայի եւ արտասահմանի այն բոլոր անկիւնները, ուր  
մտածող եւ զգացող սարեր կային , տարերն՝ որոնց հոգին էր եղած ,  
որոնց կենդանի եւ քաջալիրող օրինակն էր եղած, եւ որոնք մէկէ աւելի

բարոյական եւ քաղաքարական ամուր կապերով կապւած էին այդ Ազա-  
տագրութեան Ռահվիրային հետ :

Ընկերավարական եւ հանրասփետական թերթերու խմբագրութիւններու մէջ տեղացին ցաւակցական ուղերձներ, թաղումի մասնակցելու դանկութիւններ, ծախքերը հոգալու համար գրամական նւիրատուութիւններ, որոնք կուգային պերճախօս կերպով ապացուցանել այն բովանդակ ժողովրդականութիւնը, որ շահած էր Լուիզ Միչէլ իր մրդկոտ կեանքին դժւարին ընթացքին մէջ. կեանք մը որ ամբողջապէս նւիրւած էր Գաղափարի վեհ դասին :

Եւ Մարսիլիաի հոյակապ ցոյցէն յետոյ բարիզեան ժողովրդի մաքուր տարրին ըրած հսկայական յոյցը՝ Լիոնի կայարանէն սկսելով մինչեւ Լըվալլուաի գերեզմանատունը՝ հարիւր հազարաւոր քաղաքացիներու այդ տպաւորիչ ու ներազդու պնացքը՝ որուն նմանը միայն Վիկթօա Հիւկօի թաղումը կը յիշեն՝ անհերքելիօրէն փաստեց այն հանգամանքը, թէ, գործիչը թէպէտ մեռաւ, բայց իր քարոզած, պաշտպանած գաղափարները երթալով լա՛յն, յարաճո՛ւն զարգացումով մը տիրապետած են ժողովրդային բոլոր խաւերուն, այդ Գաղափարի խորհրդանշանը դարձած մարմինն շուրջը խմբելով բանւորը եւ գրամատէրը, գործաւորը եւ երեսփոխանը, ուսանողը եւ փիլիսոփան, արեւստագէտը եւ արեւստաւորը, ոգեւորութեան գեղեցիկ խոյանքով մը :

93-ի հզօր շունչ մը կր սաւառնէր այդ սրբ Բարիզի վրայ, յոյսով եւ հպարտութեամբ ուռեցնելով այն հարիւր հազարաւոր կուրծքերը, որոնց տակ այնքան սրտեր միեւնոյն Գաղափարի սիրով կը տրոփէին, հպարտ նայածքներու մէջ ցուացնելով ջինջ հօրիզոններու եւ նոր Արշալոյսի մը ծագումի երեւոյթէն ներազդւած խաղաղ ու վեհ վստահու-  
թիւնը . . .

12/25 Յունի, Բարիզ.

ՀՐ. ԱԼԼԱՆԱՔ

